<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ
2020թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր և հյուրեր,

Թույլ տվեք ներկայացնել Ներքին աուդիտի 2020թ. հաշվետվությունը:

Տարեկան աշխատանքային ծրագրով Ներքին աուդիտն իրականացրել է մի շարք միջոցառումներ՝

1. Գլխամասային գրասենյակ

- Դրամային թղթակցային հարաբերությունների հաշվապահական հաշվառման վարչության աշխատանքների ստուգում
- Առցանց վաճառքների գործընթացի ուսումնասիրություն
- Կադրային քաղաքականության և անձնակազմի կառավարման գործունեության ստուգում, ինչպես նաև ներքին հսկողության համակարգի գնահատում
- Վարկերի փաստաթղթավորման գործընթացի ստուգում, ինչպես նաև ներքին հսկողության համակարգի գնահատում
- Բանկի պաշտոնական կայքում հրապարակվող տեղեկատվության ուսումնասիրություն՝ համաձայն ՀՀ ԿԲ 8/03 կանոնակարգի
- Գրավադրված գույքի բռնագանձման և իրացման գործընթացի ուսումնասիրություն
- Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների/գործընթացների ստուգում
- Ոսկու գրավով ապահովված վարկերի նպատակային ստուգում
- Բոնուսների հաշվարկման և վճարման գործընթացի ստուգում
- Մասնաճյուղերի դրամարկղային հանգույցի հանկարծակի գույքագրումներ
- Ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների լուծման հետստուգման աշխատանքների իրականացում:

2. Տարածքային ստորաբաժանումներ

Ընդհանուր առմամբ տարվա կտրվածքով ստուգվել են 19 մասնաճյուղ, որից թվով 11-ը ենթարկվել են համալիր ստուգման, իսկ թվով 8-ը՝ կարճատև ստուգման (նպատակային, ըստ ոլորտի):

Արտապլանային ստուգումներ

Ներքին աուդիտը տարվա կտրվածքով իրականացրել է նաև արտապլանային աշխատանքներ, որոնք են՝

- A4 տեսակի գրասենյակային թղթի ծախսի ծավալների մեծացման ուսումնասիրություն
- Երաշխիքների տրամադրման գործընթացի ուսումնասիրություն
- Մոբայլ բանկինգ համակարգով ավանդների նվազեցման ուսումնասիրություն

Արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

- նշանակվում են պատասխանատու ստորաբաժանումներ / անձինք և ժամկետներ՝ 10-90 օր՝ ելնելով ռիսկի աստիճանից,

- իրականացվում է արձանագրված խնդիրների վերացման նկատմամբ հետհսկողություն՝ դրանց կրկնությունը բացառելու և Բանկի կառավարման մարմինների որոշումների կատարումը ստուգելու նպատակով,

- վերստուգումների ընթացքում բացահայտված տիպային խնդիրները շրջաբերական նամակով պարբերաբար ներկայացվում են Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներին՝ դրանց ուղղությամբ պահանջվող միջոցառումների և Բանկի կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների հետ միասին՝ հետագայում կրկնություններից խուսափելու և առկայության դեպքում՝ լուծելու նպատակով:

Այժմ ներկայացնեմ Ներքին աուդիտի եզրակացությունը ներքին հսկողության համակարգի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին <Յունիբանկ> ԲԲԸ ներքին հսկողության համակարգի համապատասխանության եզրակացության համար հիմք են հանդիսացել՝

- Բանկի Ներքին աուդիտի 2020թ. տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում իրականացված վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները,
- Ընթացիկ վերահսկողության և տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներից դուրս Բանկի Ներքին աուդիտի իրականացրած վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների իրագործմանն ուղղված միջոցառումները,
- ՀՀ ԿԲ իրականացված համալիր վերստուգման արդյունքներով արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված ձեռնարկված միջոցառումները, ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները,
- Արտաքին աուդիտի վերստուգման արդյունքների հիման վրա <Նամակ ղեկավարությանը> փաստաթղթով ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:

Բանկի ներքին հսկողության համակարգում արձանագրված խնդիրները ձեռնարկվող միջոցառումների արդյունքում լուծված են կամ գտնվում են կարգավորման փուլում, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ <Յունիբանկ> ԲԲԸ ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի տնօրեն
Հայկ Սուվարյան
31.05.2021թ.